

ԼԵՆԻՆՐՈՒԹ ԱՐՇԱԿԻ ԽՈՒՐՇՈՒՄՆ

Հայ պատմագիտության վերջին շրջանում ունեցած ծանր ու անփոխարինելի կարուստներին ավելացավ ևս մեկը՝ վախճանվեց անվանի պատմաբան, ճանաչված մանկավարժ ու հասարակական գործիչ, Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, Պատմաբանների հայկական ընկերության նախագահ, «Քաների Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենյորուզ Արշակի Խուրշուդյանը:

Լ. Ա. Խուրշուդյանը ծնվել է 1927 թ. մայիսի 1-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում, ծառայողի ընտանիքում: 30-ական թվականներին սկզբներին նրանց ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ նա ընդունվել և ավարտել է Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը (1946): Այնուհետև սովորել է Երևանի պետական համալսարանի նորարաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետում (1946—1951) և համալսարանի ասպիրանտուրայում (1951—1954): Որպես թեկնածուական թեզ ընտրել է Բաքվի կոմունայի (1917—1918 թթ.) Ստ. Գ. Շահումյանի ծավալած կուսակցական և պետական գործունեության բավականին քարդ և դեռևս գիտական մշակման շննթարկված թեման, որը պաշտպանեց 1956 թվականին: Առանձին հարցերում դեռևս վիճահարույց գնահատականների արժանացած այս աշխատանքը սովերազծեց երիտասարդ պատմաբանի գիտական հետազոտարիությունների շրջանակը՝ հայոց նոր և նորագույն պատմության՝ ուսումնասիրության կարոտ ամենատարբեր խնդիրներ:

1956 թ. Լ. Խուրշուդյանը աշխատանքի է անցնում ՀՀ ԳԱԱ պատմության իստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Այստեղ էլ, 1964 թվականին, 37 տարեկան հասակում, նա պաշտպանում է գիտական ու հասարակական հրատապ հեղուկություն ունեցող Սփյուռքի քաղաքական կուսակցությունների արդի պատմությանը նվիրված դոկտորական ատենախոսությունը:

1974 թվականից Լ. Խուրշուդյանը տեղափոխվում է մանկավարժական աշխատանքի: Եղել է Հայկական մանկավարժական ինստիտուտում ամբիոնի վարիչ (1974—1977), 1977 թվականից մինչև մահվան օրը՝ 22 տարի շարունակ, գլխավորել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի աշխատանքները: Նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական

կոչում (1980), ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ (1990), այնուհետև՝ ակադեմիկոս (1996): Նա Պատմաբանների հայկական ընկերության նախագահ էր, ՀՀ կառավարության և ՀԳԱ ակադեմիայի փորձաքննական հանձնաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհուրդների անդամ, «Լուսեր», «Քաների Երևանի համալսարանի» և «Քաների Հայաստանի արխիվներ» հանդեսների խմբագրական կազմի անդամ և այլն:

Պրոֆ. Լ. Ա. Խուրշուդյանն այն պատմաբաններից է, որի գիտական հետազոտություններն ընդգրկում են հայոց նոր և նորագույն պատմության գրեթե բոլոր կարևորագույն խնդիրները: Նա հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների, այլ թվում 15 գրքերի և կուլկտիվ մենագրությունների, որոնք նվիրված են հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի, հայ քաղաքական կուսակցությունների, հայոց ցեղասպանության, սփյուռքի պատմության, Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների հարցերին: Լ. Խուրշուդյանը նորարար գիտնական էր, բազմաթիվ հարցեր նա է առաջինը բարձրացրել և փորձել լրացնել հայոց պատմության «սպիտակ» մնացած շատ էջեր:

Առանձնապես մեծ է նրա ավանդը հայ քաղաքական կուսակցությունների հիմնահարցի ուսումնասիրության գործում: Այս հարցին նրան նվիրված նրա աշխատանքներից շատերը ոչ միայն նպաստել են հայ քաղաքական մտքի պատմության հետագա ուսումնասիրությանը, այլև ցայսօր պահպանել են իրենց լիամրոզ արժեքը և ուղենիշ դարձել հետագա հետազոտությունների համար: Այս քննազվառում Լ. Ա. Խուրշուդյանի կատարած գիտական աշխատանքներն ամփոփվել են այնպիսի ուսումնասիրություններում, ինչպիսիք են «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» (1964), «Հայ քաղաքական կուսակցությունների պատմության և զաղափարախոսության մի քանի հարցեր» (ռուս., Մոսկվա, 1980), «Երաշխակցություն կուսակցության քաղաքականության լուսարանումը խորհրդահայ պատմագրության մեջ» (ռուս., Մոսկվա, 1982), «Երաշխակցություն կուսակցության սօցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջը» (1986) և այլն:

Հայ քաղաքական կուսակցությունների պատմության ուսումնասիրության հետ աղերսված՝ Լ. Խուրշուդյանը առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքի հետազոտությանը, որն իր արտացոլումն է գտել 1964 թ. հրատարակած մենագրությունում և հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 8-րդ հատորում (1970):

Լ. Խուրշուդյանի ունակություններն ու համակողմանի գիտելիքները դրսևորվել են առանձնապես Հայկական հարցի գիտական ուսումնասիրության բնագավառում: Լայն ճանաչման են արժանացել պատմաբանի «Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը» մենագրությունը (1977), «Քուրբասայաստանի մասին» գեկրեստի նյութերը» (1981), «ԽՍՀՄ-ը ժողովրդական կոմիսարների խորհրդի «Քուրբասայաստանի մասին» գեկրեստը» (1987), «Ստալինը և Հայկական հարցը» (1988), «Վերակառուցումը և ազգային հարցի լուծման ուղիները» (1989) և այլ ուսումնասիրություններ: Ծարունակելով աշխատանքները Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում՝ նա առանձնակի ուշադրություն է դարձնում Արցախի ոչ վաղ անցյալի պատմության կարևորագույն խնդիրներին: Նա հեղինակներից է «Լեոնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» (ռուս., 1988, նաև՝ հայերեն և անգլերեն) կոլեկտիվ մենագրության, «Լեոնային Ղարաբաղի պատմության մի քանի հարցեր» (1988), «Ըշմարտությունը Լեոնային Ղարաբաղի մասին» (Լոս Անճելես, 1989) և այլ բազմաթիվ հոդվածների: Ընթերցող լայն հասարակությունը հատկապես ջերմորեն ընդունեց պատմաբանի «Ըշմարտությունը—պատմական գիտության միակ շափանիչն է» (ռուս., 1989) գիրքը, որտեղ վերլուծված են ազդեցական պատմագրության ու հասարակական մտքի հակահայկական միտումների պատճառները, հակապատմական սկզբունքներն ու նպատակադրումները:

Լ. Խուրշուդյանի գիտական ժառանգության մի զգալի մասը վերաբերում է պատմագիտության խնդիրներին, մի բնագավառ, որի ուսումնասիրության ուղղությամբ շատ քիչ աշխատանք էր կատարված: Նա լուսարանել է սոցիալիստական հեղափոխության, քաղաքացիական կրոնիկների, խորհրդայինների, ազգային-պետական շինարարության պատմության և պատմագրության հարցերը: Պատմաբանը հանրագումարի է բերել նշված հիմնահարցերի ուսումնասիրության ուղղությամբ խորհրդահայ պատմաբանների կատարած աշխատանքները, միաժամանակ քննել վիճելի, շնտառողական հարցեր և առաջ քաշել պատմագիտության առաջահերթ խնդիրներ: Պատմագրությանը նվիրված նրա բազմաթիվ ուսումնասիրություններ, Երևանից բացի, լույս են տեսել նաև Մոսկվայում, Ս. Պետերբուրգում, Ռիգայում, Քրիլիստում, Քիշնևում և այլուր: Այս բնագավառում տարիների բեղմ-

նավոր ու տրեւաչան աշխատանքն ամփոփվեց պատմաբանի «Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և քաղաքացիական կոնֆլիկտի պատմության և պատմագրությունը (1917—1921 թթ.)» ընդհանրացնող մենագրության մեջ (ձեռագիր):

Ձեռագիր վիճակում են գտնվում նաև պատմաբանի տարիների վիթխարի և անդուլ աշխատանքի արգասիք «Հայաստանի բաժանումները 1920 թվականին» ծավալուն մենագրությունը և մի շարք այլ անավարտ ուսումնասիրություններ: Լ. Խուրշուդյանի վերջին աշխատությունը «Հայ ազգային գաղափարախոսությունը» մենագրությունն է (1999), որի վրա հեղինակը աշխատել է մինչև իր կյանքի վերջին օրը: Այս աշխատությունը միակն է, որ նվիրված է մեղանում շրջանցված այնպիսի կարևորագույն խնդրի, ինչպիսին է ազգային գաղափարախոսությունը: Այստեղ հեղինակը ցուցաբերել է տեսական ընդհանրացումներ կատարելու եռանդ, քննական-վերլուծական խորթափանց միտք, հարցերը նորովի մեկնաբանելու և նոր տեսակետներ առաջ քաշելու կարողություն:

Պրոֆ. Լ. Խուրշուդյանը շնորհակալ աշխատանք է կատարել հայ ժողովրդի համահավաք պատմության ակադեմիական ութհատորյակի ստեղծման գործում. նա 7-րդ հատորի (1967) խմբագրության անդամ է, 8-րդ հատորի (1970) հեղինակներից մեկը: Գործուն մասնակցություն է ցուցաբերել «Հայկական խորհրդային հանրագիտարան», «Հայկական համառոտ հանրագիտարան», «Հայկական հարց. հանրագիտարան» հրատարակությունների ստեղծման գործին: Հատկապես նշելի է պատմաբանի այն մեծ ու շնորհակալ աշխատանքը, որի արդյունքը եղավ հայ ժողովրդի պատմության ուսումնական հինգ քարտեզների հրատարակումը: Դա մեծ նվիրում ու եռանդ կլանող մի գործ է, որը ստեղծվել է բացառապես նրա ջանքերի շնորհիվ, գործ, որը եզակի է իր նշանակությամբ ու խաղացած դերով:

Գիտնական-պատմաբանի արգասառատ գործունեությունը Խուրշուդյանը զուգակցել է մանկավարժական աշխատանքի հետ: Տարիներ շարունակ հայ ժողովրդի պատմություն, հայ քաղաքական կուսակցությունների պատմություն և մի շարք հատուկ դասընթացներ է դասավանդել Երևանի պետական համալսարանում: Նա մեծ սիրով ու ոգևորությամբ է իր խոր ու բազմակողմանի գիտելիքները հաղորդել ուսանողությանը: Իր բարձրաճաշակ ու գիտական կուռ տրբամաբանությամբ կառուցված դասախոսությունների միջոցով նա ուսանողների բազմաթիվ սերունդների մեջ սեր ու նվիրում է պատվաստել հայրենի երկրի պատմության նկատմամբ, դաստիարակել նրանց որպես իսկական ու ճշմարիտ հայրենասերների: Այսօր հանրապետության հարյուրավոր պատմաբաններ նրա սաներն են, նրա գիտական ղեկավարության ներքո պաշտպանվել են 25-ից ավելի թեկնա-

ժուական ատենախոսություն: Որպես գիտական անվիճելի հեղինակություն և ճանաչված պատմաբան, նա հայ պատմագիտությունը ներկայացրել է միջազգային ու միութենական բազմաթիվ գիտաժողովներում ու նստաշրջաններում (Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Ռիգա, Քրիլիսի, Քիշնև, Բոստոն, Լոս Անճելես, Քեհերան, Սպահան, Բեյրութ, Բուենոս-Այրես և այլն):

Լ. Ա. Խուրշուդյանը կարինետային, հասարակությունից կտրված գիտնական շէր: Առանձնապես հայտնի է նրա կարևոր մասնակցությունը հանրապետության հասարակական-քաղաքական

կյանքին, մասնավորապես Ղարաբաղյան շարժմանը, ավանդը ազգային-ազատագրական շարժման արդի փուլի գաղափարախոսության մշակման գործում:

Հանձին Լ. Խուրշուդյանի, պատմագիտությունն ու հասարակական միտքը կորցրին տաղանդավոր մտավորականի, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հարազատ ժողովրդին բուրրանվեր ծառայելուն:

● 2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ